ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված գործակարգավարական խորհրդակցության

26.01.2026թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր մարզպետ Ա.Մկրտչյանը.
Մասնակցում էին
Մ.Դալլաքյանը - գլխավոր քարտուղար
Լ.Աբրահամյանը - մարզպետի խորհրդական
Հ.Ադամյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Է.Կռոյանը - մարզպետի օգնական
Կ.Ադամյանը, Ա.Շիրինյանը, Ռ.Պողոսյանը, Ռ.Մարգարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Լ.Մաթոսյանը, Է.Հախվերդյանը, Ա.Բեջանյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Մալոյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. **Նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություն**
   /զեկուցող Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ/

2. **Այլ հարցեր**:

ՀՀ Լոռու մարզպետ Ա.Մկրտչյանը շնորհավորեց մարզպետի օգնական Էրիկ Կռոյանին՝ պաշտոնում նշանակվելու կապակցությամբ, ցանկացավ արդյունավետ աշխատանքային գործունեություն՝ ի բարօրություն Հայաստանի Հանրապետության և Լոռու մարզի:

Մարզպետը կարևորեց աշխատակազմի կողմից ըստ գործառույթների աշխատանքի կազմակերպման և արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները՝ նշելով, որ աշխատանքի բաժանումը պետք է լինի ուղղաձիգ ըստ աստիճանակարգության և վերադասության՝ առաջադրված խնդիրների լուծման նպատակով, պետք է հստակ աշխատանքի և գործառույթների բաժանում լինի և յուրաքանչյուր աշխատող իրեն տրված հանձնարարականները կատարի սահմանված ժամկետներում և պատշաճ կարգով:

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները ներկայացրեցին կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ տեղեկատվություն:

Լոռու մարզպետը հանձնարարեց.

1. **ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝**

1.1 Ներկայացնել վերջնական տեղեկատվություն դպրոց և մանկապարտեզ տանող ճանապարհների շինաշխատանքների կատարման վերաբերյալ:

1.2 Պատշաճ կարգով ուսումնասիրել համայնքների կողմից ներկայացվող սուբվենցիոն ծրագրերի նախագծերի փաթեթները, որպեսզի դրանք համապատասխանեն ներկայացվող պահանջներին:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանին՝

Մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել ամբողջական տեղեկատվություն Լոռու մարզի կտրվածքով առողջապահական համապարփակ ապահովագրության շահառուների թվի և հատկացված գումարի վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Ա.Շիրինյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ, մասնավորապես՝ դիտարկել խոշոր ապառքներ ունեցող անձանց կողմից պարտավորությունների կատարման գործընթաց իրականացնելը:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Լ.Մաթոսյանին, աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ Է.Հախվերդյանին՝

Ուսումնասիրել և 1-շաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն Վանաձոր համայնքի կանգառներին կից հողամասերի և տարածքների պատկանելության, դրանց մասով պայմանագրերի կնքման, ժամկետների և օրինականության վերաբերյալ:

5. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ Ա.Մալոյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն 2018-2025 թթ. ընթացքում մարզում 1 մլն դոլլարից ավել ներդրումային ծրագրերի իրականացման վերաբերյալ:

6. Լոռու մարզպետի օգնական Հ.Հակոբյանին՝

Շարունակել հանդիպումները և շփումները մարզի համայնքներում Ղարաբաղից բռնի տեղահանված և մարզում բնակություն հաստատած բնակիչների հետ, ուսումնասիրել կարիքները, առաջարկությունները և յուրաքանչյուր ուրբաթ ներկայացնել տեղեկատվություն:

X

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԿՐՏՉՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99